

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՖԱԿՈՒԼՏԵՏ՝ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԱՄԲԻՈՆ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ՝ ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ

**Թեմա՝ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների
ուսուցման կազմակերպումը տարրական դպրոցում**

**The Peculiarities of organization of inclusive education of children with special
educational needs in elementary school**

ՄԱԳԻՍՏՐՈՍ՝ Լ. Մ. Հովնաթանովա

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ մ. գ.թ Ս. Յ. Հովհաննիսյան

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար:

Ներառական կրթության ծրագիրն այսօր իրականացման փուլում է: Ներառական կրթությունը, լինելով կրթության երիտասարդ համակարգ, դեռևս լիովին ձևավորված չէ, այսինքն իր առջև դեռևս չլուծված խնդիրներ ունի: Տարրական դպրոցում ներառական կրթության խնդիրներից մեկն է նաև հատուկ կարիքներով երեխաների և բնականոն զարգացում ունեցող երեխաների փոխհարաբերությունների ձևավորումը և համագործակցությունը, ինչպես նաև դասվարի դերն այդ գործընթացում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է.

բացահայտել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման առանձնահատկությունները տարրական դպրոցում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԿԱԾԸ.

Ենթադրվում է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպումը դպրոցում համակարգված և արդյունավետ կլինի, եթե.

- Հստակեցվի ներառական կրթության էությունն ու անհրաժեշտությունը հանրակրթության ոլորտում:
- Ապահովվեն համապատասխան մանկավարժական պայմաններ:
- Ուսուցիչները ունենան համապատասխան մասնագիտական գիտելիքներ՝ ներառական կրթություն իրականացնելու համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ.

1. Ուսումնասիրել ներառական կրթության կազմակերպման առանձնահատկությունները տարրական դպրոցում:

2. Ուսումնասիրել ուսուցչի դերը ներառական կրթության գործընթացում:

3. Բացահայտել ներառական կրթության գործընթացում բնականոն զարգացում ունեցող և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հուզականային ոլորտի դրսևորումը, նրանց փոխհարաբերությունները:

4. Փորձարարությամբ ստուգել և հիմնավորել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպման մանկավարժական աշխատանքի արդյունավետությունը տարրական դպրոցում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.

Հետազոտության համար հիմք են հանդիսացել մանկավարժության մի շարք տեսություններ, հումանիստական մանկավարժության և հոգեբանության վերաբերյալ գաղափարներ, ինչպես նաև դպրոցներում ներառական կրթության կազմակերպման վերաբերյալ համապատասխան ուսումնասիրություններն ու մշակումները (Ա. Յա. Վարլամովա, Ռ. Վ. Օվչարովա, Ա. Կ. Մարկովա, Ն. Լ. Վասիլյևա, Ե. Ի. Աֆանասյևա և այլն):

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Վերլուծվել և բնութագրվել են տարրական դպրոցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման դժվարություններն ու առանձնահատկությունները, նրանց ուսուցման կազմակերպումը՝ ներառական կրթության պայմաններում: Մշակվել են տարրական դպրոցում ներառական կրթության կազմակերպման ժամանակակից ձևեր:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾԱՎԱԼՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից՝ տեսական և փորձարարական, եզրակացություններից և գրականության ցանկից:

ՊԱՇՏԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ.

- Տարրական դպրոցում ուսուցման գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ներառական կրթության առանձնահատկությունների և կազմակերպման ձևերի ապահովմամբ:
- Ներառական կրթությունը իրականացվում է ուսուցչի և մանկավարժական կազմի կողմից, ուստի ուսուցման արդյունավետությունն ապահովելու համար ուսուցիչները պետք է ունենան համապատասխան մասնագիտական գիտելիքներ:
- Բնականոն զարգացում ունեցող և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հուզականային ոլորտի բացահայտման, նրանց փոխհարաբերությունների ձևավորման ընթացքում կիրառվող մանկավարժական պայմանների ստեղծում:
- Տարրական դպրոցում գործունեության տարբեր ձևերի կիրառումը նպաստում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպման մանկավարժական աշխատանքի արդյունավետությանը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոգեբանամանկավարժական և մեթոդական գրականության տեսական վերլուծության և փորձարարական աշխատանքի ստացված արդյունքների ամփոփման հիման վրա հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Ուսումնասիրվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառական ուսուցման կազմակերպման առանձնահատկությունները տարրական դպրոցում (զարգացնող միջավայր, համապատասխան մասնագիտական խումբ, ներառական կրթության ծրագրեր): Ներառական կրթության մատչելիությունը իրենից ներկայացնում է ծրագրային առումով պարզ, միևնույն ժամանակ արդյունավետ ուսումնական գործունեության կազմակերպում, որի հիմքը ուսուցիչ-աշակերտ համագործակցությունն է:

2. Ուսումնասիրվել է դասվարի դերը ներառական կրթության գործընթացում: Այստեղ կրթական գործընթացի ողջ պատասխանատվությունը ընկնում է ուսուցիչի վրա, ուսուցիչն է պատասխանատու յուրաքանչյուր աշակերտի անձի ձևավորման գործում նրանց ճիշտ ուղղություն ցույց տալու, նրա սոցիալականացման և հասարակության կողմից ընդունման համար: Ներառական կրթության պայմաններում ուսուցչից պահանջվում են հատուկ ընդունակություններ: Նա պետք է կարողանա՝ հասկանալ

երեխային, ժամանակին խրախուսել, աջակցել, ոգևորել, ներառել ուսումնական գործունեության մեջ:

Ներառական կրթության գործընթացում շեշտադրվում է դասվարների հոգեբանամանկավարժական պատրաստվածության մակարդակը և վերապատրաստման անհրաժեշտությունը:

3. Բացահայտվել են բնականոն զարգացում ունեցող և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող տարրական դասարանի աշակերտների հուզակամային ոլորտի դրսևորումը /գործունեության տարբեր ձևերում ստեղծեցինք դրական հուզական մթնոլորտ/, նրանց փոխհարաբերությունները, նրանց հաղորդակցական, համագործակցության կարողությունների ձևավորմանն ուղղված մանկավարժական պայմաններ՝ խաղ-վարժություններ, զարգացնող խաղեր, անհատական աշխատանքներ, համատեղ աշխատանք, խմբային հանձնարարություններ դասի ընթացքում և դասից դուրս, որոնք խթանեցին բնականոն զարգացում ունեցող և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների փոխգործունեությանը և համագործակցությանը:

4. Փորձարարությամբ ստուգվել և հիմնավորվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպման մանկավարժական աշխատանքի արդյունավետությունը տարրական դպրոցում: Մանկավարժական աշխատանքի առավել արդյունավետ արդյունքներ գրանցվեցին հատկապես խաղային գործընթացներում, խաղ-վարժություններում, քանի որ խաղը երեխաների զարգացման լավագույն պայմանն է, նրա սոցիալականացման առաջնային օղակը: Կազմակերպված սեմինարների և զրույցների միջոցով փորձեցինք ուսուցիչների և ծնողների ուշադրությունը կենտրոնացնել այ հանգամանքին, որ ներառական կրթության պայմաններում բոլոր երեխաները հավասար են, ունեն կրթություն ստանալու իրավունք, դասվարը չպետք է անտեսի որևէ մի աշակերտի: Ծնողներն էլ ընտանիքում համապատասխան զրույցների, հորդորների միջոցով պետք է բացատրեն իրենց երեխաների ներառական կրթության էությունը, որպեսզի երեխաները չանտեսեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին, ընկերանան և օգնեն նրանց:

